ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 15.05.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-27/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-27/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից 15.05.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-27/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. **<u>«Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

<u>Բողոքի առարկան.</u>

20.02.2013թ. 14:00-ին կայացել է «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/4» ծածկագրով բաց ընթացակարգը, որի արդյունքում Պատվիրատուի 05.03.2013թ. 15:19-ի ծանուցմամբ՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի «ՀՀ Գեղարքունիքի մարզի գ.Աստղաձորի դպրոցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ» 3-րդ չափաբաժնի մասով «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ից պահանջվել է ներկայացնել կազմակերպության որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող և հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված կարգով հանձնաժողովին է ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող և հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), որի արդյունքում հաշվի առնելով օրենքի նույն հոդվածի 6-րդ կետով սահմանված կարգը պատվիրատուն իր հաջորդ՝ 22.03.2013թ. ծանուցմամբ հրապարակել է, որ «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն անցել է հաջորդ փուլ և «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/4» գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով և հայտարարվել է ընտրված մասնակից (ծանուցումը կցվում է): Նշված գործընթացի ժամանակ լիցենզիայի կասեցման վերաբերյալ ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը չի եղել և լիցենզիան գործել է (այն անընդմեջ գործել է նաև հետագայում): Բավարարված է եղել նաև մրցույթի հրավերով նախատեսված լիցենզիայի առկայությունը և գործողության նկատմամբ պահանջ, որն է՝ «Մասնակցի կողմից ներկայացվող լիցենզիան չպետք է կասեցված լինի, ինչպես նաև դրա գործողության ժամկետը չի կարող պակաս լինել նույն հրավերով նախատեսված՝ ձեռքբերվող աշխատանքների Մասնակցի կողմից հայտով ներկայացված կատարման վերջնաժամկետից):

Վերը նշված ծանուցումն ստանալուց հետո ապրիլի առաջին օրերին «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն այլ աղբյուրներից տեղեկանում է կազմակերպության լիցենզիայի կասեցման մասին և անմիջապես ձեռնամուխ լինում կասեցման պատճառների պարզմանը և դրանց վերացմանը:

Ընկերությունը դիմել է լիցենզավորման գործառույթները սպասարկող ծառայություններին պարզաբանումներ ստանալու համար, սակայն նրանց կողմից

պատճառի և վերացման մասին կոնկրետ ոչինչ չի ասվել և չի հանձնարարվել: «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն լրացրել է ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի «Լիցենզավորման կենտրոն» գործակալությունը իրենց կողմից նախկինում ներկայացրած տվյալների փոփոխությունները և 08.04.2013թ. ներկայացրել է լիցենզավորող մարմնին (հաստատումը կցվում է):

Լիցենզավորող մարմնում փաստաթղթերը հանձնելուց չորս օր հետո «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն ստանում է ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանը լիցենզիայի կասեցման մասին:

Պատվիրատուն հաջորդ 17.04.2013թ. 11:49 ծանուցմամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանով «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի լիցենզիան կասեցվել է և այդ պատճառով որոշում է կայացվել, որ կազմակերպության հետ պայմանգիր կնքելը հնարավոր չէ:

Ծանուցմամբ նշվել է, որ հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանը՝ որով կասեցվել է «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/4» ծածկագրի հրավերով պահանջվող քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակում լիցենզիան, «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի հետ հնարավոր չէ կնքել պետական գնման պայմանագիր և հաշվի առնելով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը և «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից տուժանքի համաձայնագրով ստանձնած պարտավորությունները՝ «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն պարտավոր է 150.000 /հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ փոխանցել ՀՀ ֆինասների նախարարության կենտրոնական գանձապետարանի թիվ 900005240511 հաշվին նույն ծանուցումն ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում և վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնել ՀՀ ՔՆ Քաղաքաշինական ԾԻԳ ՊՀ, հակառակ դեպքում կձեռնարկվեն համապատասխան միջոցներ գումարը գանձելու ուղղությամբ:

<u>Բողոքի փաստային և իրավական հիմքերը, ապացույցները.</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող

հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

«Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տվյալները, այդ թվում նաև որակավորումը հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև լիցենզիայի նկատմամբ հրավերով պահանջվող պայմանները, որն է՝ մասնակցի կողմից ներկայացվող լիցենզիան չպետք է կասեցված լինի, ինչպես նաև դրա գործողության ժամկետը չի կարող պակաս լինել նույն հրավերով նախատեսված՝ ձեռքբերվող աշխատանքների մասնակցի կողմից հայտով ներկայացված կատարման վերջնաժամկետից, բավարարել են օրենքի և հրավերի պահանջներին և որոնց գնահատականով «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանվում է, որ լիցենզիայի գործողությունը կասեցված է համարվում այդ մասին լիցենզավորող մարմնի որոշումը լիցենզավորված անձին պատշաճ հանձնելու կամ նրա մոտ մուտքագրվելու օրվանը հաջորդող օրվանից, եթե լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին որոշմամբ կամ օրենքով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ»: «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի մոտ լիցենզիայի կասեցման հրամանը մուտքագրվել է 12.04.2013թ.՝ հիմք փոստային ծանուցում: Ըստ սահմանման լիցենզիայի կասեցումը ուժի մեջ է մտնում 12.04.2013թ.:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանվում է, որ լիցենզիայի գործողության կասեցումը վերացված է համարվում կասեցման ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից: Եթե լիցենզիայի գործողության կասեցման ժամկետը սահմանվել է մինչև խախտման պատճառի վերացումը, ապա լիցենզիայի գործողության կասեցումը վերացված է համարվում լիցենզավորված անձի՝ խախտումները վերացնելու մասին հայտարարությունը (համապատասխան հիմնավորող փաստաթղթերով) լիցենզավորող մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե այդ ժամկետում լիցենզավորորող մարմինն այլ որոշում չի կայացնում կամ այլ ավելի կարճ ժամկետ չի սահմանում և դրա մասին պատշաճ ձևով լիցենզավորված անձին չի հայտնում»: «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից կատարված փոփոխությունների մասով փաստաթղթերը լիցենզավորող մարմնին մուտքագրվել են 08.04.2013թ. հիմք՝ գրության մուտքագրման հաստատում: Ըստ սահմանման, լիցենզիայի

կասեցումը վերացված համարումը ուժի մեջ է մտնում 13.04.2013թ.: Այստեղից հետևում է, որ «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի լիցենզիայի գործունեությունը չի ընդհատվել:

Հետևաբար, գնման գործընթացի որակավորման գնահատման ժամանակ ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանը չի եղել, լիցենզիայի կասեցման մասին իրազեկման և լիցենզիայի գործողության կասեցումը վերացված համարման համար նախատեսված ժամանակահատվածների համադրման արդյունքում ստացվում է, որ լիցենզիայի գործունեությունը չի ընդհատվել: Վիճարկելի է նաև ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանի իրավաչափությունը լիցենզիայի կասեցման վերաբերյալ, քանի որ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի Լիցենզիայի գործողության կասեցման կարգի 35-րդ հոդվածի 1-ին կետի հետևում է, որ լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել միայն լիցենզավորող մարմնի լիցենզավորման հանձնաժողովի եզրակացության համաձայն: Օրենքով սահմանվում է, որ լիցենզավորող մարմինն իրավունք ունի օրենսդրության պահանջների խախտման պատճառով լիցենզիայի գործողությունը կասեցնել միայն լիցենզավորող մարմնի լիցենզավորման հանձնաժողովի եզրակացության համաձայն:

<u>Բողոքի պահանջը.</u>

«Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն խնդրում է դադարեցնել ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի «ՔՆՔԾԻԳ-ԲԲԱՇՁԲ-13/4» Չափաբաժին-3 ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Աստղաձորի դպրոցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների մասով «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի հետ պետական գնման պայմանագիր չկնքելու որոշումը:

2. <u>ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 02.05.2013թ. N 04/032-665 գրությամբ դիմել է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 25.04.2013թ. «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն 15.05.2013թ. N ՀՍ/1-435-13 գրությամբ «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

2013թ. մարտի 22-ին «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/4» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով (ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Աստղաձորի դպրոցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ) հայտարարվել է ընտրված մասնակից:

Պատվիրատուն՝ ՀՀ ՔՆ քաղաքաշինական ԾԻԳ ՊՀ-ն սույն թվականի մարտի 28-ին ստացել է գրություն՝ կից ՀՀ քաղաքաշինության նախարարի N 95 հրամանով: Վերջինիս համաձայն՝ կասեցվել է «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի «13713-քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն» լիցենզիան՝ 01,03,04 ներդիրներով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի հիմքով, որը սահմանում է. «Լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել՝ ...լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման ժամանակ այդ լիցենզիայի պահանջների ու պայմանների, ինչպես նաև լիցենզավորման ենթակա գործունեությունը կարգավորող օրենսդրության պահանջների կոպիտ խախտման դեպքում...», իսկ որպես կասեցման ժամկետ նշվել է խախտման վերացումը: Այնուհետև «Լիցենզավորման կենտրոն» գործակալություն հարցում է կատարվել վերը նշված լիցենզիայի կասեցման վերաբերյալ, որին ի պատասխան հայտնել են, որ լիցենզիան կասեցված է, որի մասին սույն թվականի ապրիլի 2-ին պատշաճ ծանուցվել է «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ 17.04.2013թ. «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն ծանուցվել է, որ հնարավոր չէ վերջինիս հետ կնքել պայմանագիր:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է. «...լիցենզիայի գործողությունը կասեցված է համարվում այդ մասին

լիցենզավորվող մարմնի որոշումը լիցենզավորված անձին պատշաճ հանձնելու կամ նրա մոտ մուտքագրվելու օրվանը հաջորդող օրվանից, եթե լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին որոշմամբ կամ օրենքով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ»: Հետևաբար կասեցման մասին որոշումը համարվում է ուժի մեջ մտած պատշաճ ծանուցման հաջորդ օրվանից՝ 2013թ. ապրիլի 3-ից:

Մինչդեռ «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն բողոքում նշել է, որ ծանուցվել է ապրիլի 12-ին: Բողոք ներկայացրած անձը նշել է, որ խախտումները վերացնելու մասին հայտարարությունը՝ կից փաստաթղթերով ներկայացվել են սույն թվականի ապրիլի 8-ին, իսկ քանի որ կասեցումն ուժի մեջ է մտնում 13.04.2013թ., ապա լիցենզիայի գործողությունը երբեք չի ընդհատվել: Մինչդեռ, նշված հետևությունը զուրկ է որևէ հիմքերից, քանի որ փաստաթղթերը ներկայացնելուց հետո, ինչպես նշում է բողոք ներկայացրած անձը, չորս օր հետո գրավոր ծանուցվել է լիցենզիայի կասեցման մասին: Հետևաբար, նշված փաստը ցույց է տալիս, որ փաստաթղթերը ներկայացնելուց հետո անգամ լիցենզավորող մարմինը կասեցման հիմք հանդիսացող խախտումները չի համարվել վերացված և չորս օր հետո ծանուցել է կասեցման մասին: Ինչ վերաբերում է բողոքում արտահայտված այն հետևություններին, որ «... ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանը չի եղել ...», «... լիցենզիայի գործունեությունը չի ընդհատվել ...», «... վիճարկելի է նաև ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանի իրավաչափությունը լիցենզիայի կասեցման վերաբերյալ», ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն նշել է, որ բողոքաբերն ըստ էության վիճարկում է ոչ թե պատվիրատուի որոշումը, այլ պատվիրատուի որոշման համար հիմք հանդիսացող լիցենզիայի կասեցման մասին որոշումը՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը: Մինչդեռ վերջինիս վիճարկումը չի առնչվում գնումների գործընթացին և հետևաբար այն ենթակա չէ քննության տվյալ բողոքի շրջանակներում:

Պատվիրատուի կողմից պայմանագիրը չկնքելու մասին որոշում կայացնելը հիմնված է եղել լիցենզիայի կասեցման մասին ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանի վրա, որը մինչ օրս շարունակում է գործել, իսկ «Լիցենզավորման կենտրոն» գործակալությունից ճշտված տեղեկությունների համաձայն նշված լիցենզիան դեռևս շարունակում է կասեցված լինել, ուստի պատվիրատուն պարտավոր է եղել կայացնել նմանատիպ որոշում:

Այսպիսով, ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները, գտնում է, որ բողոքն ենթակա է մերժման:

3. ԳԲԽ-27/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից 25.04.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-27/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-27/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 25.04.2013թ. ներկայացված բողոքը, «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/4» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանը, ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի 15.05.2013թ. N ՀՍ/1-435-13 գրությունը, «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/4» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգի 05.03.2013թ. ժամը 15:19-ի, 17.04.2013թ. ժամը 11:49-ի ոչ ավտոմատ էլեկտրոնային ծանուցումները և 22.03.2013թ. ժամը 18:23-ի ավտոմատ ծանուցումը, ՀՀ քաղաքաշինության նախարարության «Լիցենզավորման կենտրոն» գործակալության պետի 15.05.2013թ. տեղեկանքը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/4» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.03.2013թ. ժամը 15:19-ի ծանուցմամբ, «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ից պահանջվել է ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ներկայացնել Ընկերության որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո Պատվիրատուի՝ 22.03.2013թ. ծանուցմամբ տեղեկացվել է այն մասին, որ «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է ընտրված մասնակից: Սակայն նշված ծանուցումը ստանալուց հետո՝ ապրիլի առաջին օրերին, «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն այլ աղբյուրներից տեղեկացել է Ընկերության լիցենզիայի կասեցման մասին և անմիջապես ձեռնամուխ է եղել լիցենզիայի կասեցման պատճառները պարզելու և դրանք վերացնելու համար: Լիցենզիայի կասեցման պատճառների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու խնդրանքով դիմել է լիցենզավորման գործառույթները սպասարկող ծառայություններին, սակայն վերջիններիս կողմից լիցենզիայի կասեցման պատճառի և կասեցման վերացման մասին կոնկրետ ոչինչ չի ասվել և չի հանձնարարվել: Ընկերությունը լրացրել է ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի «Լիցենզավորման կենտրոն» գործակալությանը իրենց կողմից նախկինում ներկայացրած տվյալների փոփոխությունները և 08.04.2013թ. ներկայացրել է լիցենզավորող մարմնին: Լիցենզավորող մարմնում փաստաթղթերի հանձնումից չորս օր հետո «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն ստացել է ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանը՝ լիցենզիայի կասեցման մասին:

Բողոքաբեր ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է նաև, որ Պատվիրատուն հաջորդ՝ 17.04.2013թ. 11:49 ծանուցմամբ, հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանով «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի լիցենզիան կասեցվել է և այդ պատճառով որոշում է կայացվել, որ կազմակերպության հետ պայմանագիր կնքելը հնարավոր չէ:

Պատվիրատուն 15.05.2013թ. N ՀՍ/1-435-13 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ 2013թ. մարտի 22-ին «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/4» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով (ՀՀ

Գեղարքունիքի մարզի գ.Աստղաձորի դպրոցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ) հայտարարվել է ընտրված մասնակից: Պատվիրատուն՝ ՀՀ ՔՆ քաղաքաշինական ԾԻԳ ՊՀ-ն, սույն թվականի մարտի 28-ին ստացել է գրություն՝ կից ՀՀ քաղաքաշինության նախարարի N 95 հրամանով, որի համաձայն կասեցվել է «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի «13713-քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն» լիցենզիան՝ 01,03,04 ներդիրներով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի հիմքով, իսկ որպես կասեցման ժամկետ նշվել է խախտման վերացումը: Այնուհետև ՀՀ քաղաքաշինության նախարարության «Լիցենզավորման կենտրոն» գործակալություն հարցում է կատարվել նշված լիցենզիայի կասեցման վերաբերյալ, որին ի պատասխան հայտնել են, որ լիցենզիան կասեցված է, որի մասին 02.04.2013թ. պատշաճ ծանուցվել է «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ 17.04.2013թ. «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն ծանուցվել է, որ հնարավոր չէ վերջինիս հետ կնքել պայմանագիր:

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/4» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ):

Հրավերի 1-ին մասի 1-ին կետով սահմանվել է, որ նույն հրավերով նախատեսված բոլոր չափաբաժինների աշխատանքները կատարելու համար պահանջվում է «Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակում» լիցենզիան ըստ հետևյալ ոլորտների՝

- Բնակելի, հասարակական և արտադրական,
- Հիդրոտեխնիկական,
- Էներգետիկ:

«ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/4» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի.

- 22.03.2013թ. ժամը 18:23-ի ավտոմատ ծանուցմամբ նշվել է հետևյալը.

«Է-Մրցույթի պլատֆորմ-Արդյունքների հրապարակում.

Ձեր կազմակերպությունն անցել է ՀՀ քաղաքաշինության նախարարության Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում մրցույթի հայտերի ներկայացման որակավորման հաջորդ փուլ»:

ՔՆՔԾԻԳ-ԲԲԱՇՁԲ-13/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ՔՆՔԾԻԳ-ԲԲԱՇՁԲ-13/4 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է հայտարարվել «Սթեն» ՍՊԸ-ն, 2-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով «ՀԳՇՆ» ՍՊԸ-ն, 3-րդ չափաբաժնի մասով՝ «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն, 6-րդ չափաբաժնի մասով՝ «Երանգ» ՍՊԸ-ն, 7-րդ չափաբաժնի մասով՝ «Հայնախագիծ» ԲԲԸ-ն:

Ձեր կազմակերպությունը կստանա գնահատման հաջորդ ռաունդին մասնակցելու իրավեր: Հրավերն ընդգրկելու է նոր ռաունդի պահանջներին առնչվող հետագա մանրամասներ»:

- 17.04.2013թ. ժամը 11:49-ին ոչ ավտոմատ ծանուցմամբ նշվել է հետևյալը.

«Ծանուցում.

ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանը՝ որով կասեցվել է Ճարտարապետ Է. Հովսեփյան ՍՊԸ-ի ՔՆՔԾԻԳ-ԲԲԱՇՁԲ-13/4 ծածկագրով հրավերով պահանջվող Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակում լիցենզիան, հայտնում եմ, որ «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի հետ հնարավոր չէ կնքել պետական գնման պայմանագիր:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը և Ձեր կողմից տուժանքի համաձայնագրով ստանձնած պարտավորությունները՝ Դուք պարտավոր եք 150000 /հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի թիվ 900005240511 հաշվին սույն ծանուցումն ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում և վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնել ՀՀ ՔՆ Քաղաքաշինական ԾԻԳ ՊՀ, հակառակ դեպքում կձեռնարկվեն համապատասխան միջոցներ գումարը գանձելու ուղղությամբ»:

ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանի համաձայն՝ բողոքաբեր կազմակերպությանը 08.02.2010թ. տրամադրված «Քաղաքաշինության

բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակում» N 13713 լիցենզիայի 01, 03 և 04 ներդիրների գործողությունը կասեցվել է մինչև թերությունների վերացումը:

Կենտրոնում 15.05.2013թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած բանավոր լսումների ընթացքում Պատվիրատուի ներկայացուցիչը ԳԲԽ 27/13 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրեց ՀՀ քաղաքաշինության նախարարության «Լիցենզավորման կենտրոն» գործակալության պետի կողմից 15.05.2013թ. տրված տեղեկանքը, ըստ որի «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի թիվ 13713-01, 03, 04 ներդիրները կասեցված են ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013թ. մարտի 27-ի թիվ 95 հրամանով, որի մասին Կազմակերպությունը տեղեկացվել է 2013թ. ապրիլի 2-ին, ինչպես նաև «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ քաղաքաշինության նախարարություն 2013թ. ապրիլի 8-ին, որոնք գտնվում են ուսումնասիրության ընթացքի մեջ, հետևաբար համապատասխան ներդիրների կասեցումները դեռևս վերացված չեն: Լսումների ընթացքում «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի թիվ 13713-01, 03, 04 ներդիրները ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013թ. մարտի 27-ի թիվ 95 հրամանով կասեցված լինելու մասին 02.04.2013թ. ծանուցված լինելու փաստը հաստատեց նաև բողոքաբեր ընկերության տնօրենը:

Այսինքն, «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/4» ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու անհնարինության մասին բողոքաբեր կազմակերպությանը ծանուցելու պահին՝ 17.04.2013թ., վերջինիս կողմից Հրավերով պահանջվող լիցենզիայի համապատասխան ներդիրները կասեցված են եղել և 15.05.2013թ. դրությամբ դեռևս կասեցված են:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիցենզիայի գործողության կասեցման ընթացքում լիցենզավորված անձն իրավունք չունի իրականացնել կասեցման որոշմամբ սահմանված գործունեություն, գործառույթ կամ գործողություն, բացառությամբ նրանց, որոնք ուղղված են լիցենզիայի գործողության կասեցման պատճառները վերացնելուն, ինչպես նաև կասեցման մասին որոշմամբ նախատեսված անհետաձգելի միջոցառումներն իրականացնելուն:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը՝

ՈՐՈՇԵՑ

«Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից «Գնումների աջակցման կենտրոն»ՊՈԱԿ 25.04.2013թ. ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ազգանուշ Ֆրանգյան

Անդամներ՝ Արայիկ Մնացականյան

Նարինե Նիկոլայան